

ՆՈՒՆԵ ՎԱՐԱՋԱՏԻ ԴԵՐՈՅԱՆ



Վերջերս մեզանից հեռացավ հետաքրքիր ճակատագիր ունեցող մի ազնվական, գեղեցիկ կին, որի տոհմական արմատներն առաջացնում են խոր հիացմունք, նաև մեծ ցավ: Այդ կինը Նունե Վարաճատի Դերոյանն է, որը երկար տարիներ եղել է «Պատմաբանասիրական հանդես»-ի՝ այդ հեղինակավոր պարբերականի բաժնի վարիչը, ապա՝ ամսագրի պատասխանատու քարտուղարը:

Նունե (Նունիկ) Դերոյանը ծնվել է 1923-ին Երևանում: Հաճախել է Ստ. Շահումյանի անվան թիվ 1 դպրոցը, որտեղ այդ տարիներին որպես օտար լեզու անցնում էին ֆրանսերեն: Հատկապես այդ առարկայի նկատմամբ ունեցած մեծ սերը 1940-ին նրան տանում է Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և գրականության ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության բաժինը, որը հաջողությամբ ավարտել է 1945-ին:

Համալսարանում սովորելու տարիներին Ն. Դերոյանը մշտապես աշխատել է տարբեր հիմնարկներում՝ իր ընտանիքին օգնելու համար: 1944-ից աշխատանքի է անցել ՀՍՄԻ ԳԱ-ում, երբ դեռ սովորում էր համալսարանում: Այնուհետև՝ մինչև 2011 թ., նա աշխատել է ՀՀ ԳԱԱ-ի տարբեր բաժիններում:

Եղել է բարեխիղճ ու նվիրյալ աշխատող, ու նրա պարգևը 1947-ին եղել է մեկ ամսվա աշխատավարձի տեսքով, նույնը կրկնվել է 2010 թ. դեկտեմբերի 20-ին, որի հրամանագրում նշված է: «Նունիկ Դերոյանի երկարատև և բարեխիղճ աշխատանքի համար հայտնել շնորհակալություն և պարգևատրել մեկ ամսվա աշխատավարձի չափով»:

1952 թ. Ն. Դերոյանը ՀՍՄԻ ԳԱ ասպիրանտուրայի բաժնի վարիչն էր, իսկ 1954-ին՝ ԳԱ-ի փոխնախագահի օգնականը: Որոշ ժամանակահատված եղել է ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի քարտուղար:

1972-ից Ն. Դերոյանն արդեն աշխատում էր «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրությունում՝ սկզբում որպես բաժնի վարիչ, հետո՝ պատասխանատու քարտուղար:

2008-ից մինչև 2010 թվականի դեկտեմբեր ամիսն աշխատել է «Տեղեկագիր տեխնիկական գիտությունների» հանդեսում՝ որպես գիտական խմբագիր:

Սրանք թվեր ու չոր փաստեր են, որոնք իրականում մի օրինակելի ու գեղեցիկ կյանքի պատմություն ունեն իրենց մեջ:

«Պատմաբանասիրական հանդես»-ում աշխատելու երկար տարիների ընթացքը նրան բերել են բարեխիղճ, գիտակ, անկողմնակալ, զարգացած պա-

տասխանատու խմբագրի պատվավոր համբավ: Այս հեղինակավոր պարբերականի գլխավոր խմբագիրն ու հիմնադիրն ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանն էր, որն իր բազմաթիվ գրքերի թվում ունի նաև եզակի մի ժողովածու՝ լույս տեսած 1966-ին ռուսերեն՝ «Геноцид армян в Османской империи»: Հայոց ցեղասպանությունը մերկացնող փաստաթղթերի ու համապատասխան նյութերի այդ կարևոր ժողովածուն 1991-ին լույս տեսավ նաև հայերեն: Ժողովածուում նշված չէ, թե ով է հավաքել այդ հսկայածավալ նյութերը: Իրականում այդ աշխատատար ու բժախնդիր գործը կատարել է նաև Նունե Դերոյանը՝ ցեղասպանությունը վերապրածի դուստրը:

Ծանր ճակատագիր է բաժին հասել այդ կնոջը: Նրա կերպարի խիստ ինքնատիպությունն ընկալելու համար անհրաժեշտ է ծանոթանալ ընտանիքին՝ հորը, մորը, եղբայրներին, քեռուն և մերձավոր այլ ազգականների ճակատագրերին:

Վարազդատ հոր կերպարը մշտապես ուղեկցել է Նունե Դերոյանին և պատահական չէ, որ նա Հայաստանի անկախությունից հետո սկսում է հրատարակել իր հոր այն գործերը, որոնք չարագուշակ 1935-ի հոր ձերբակալման հետևանքով չէին ոչնչացվել: Իսկ այդ գրքերը շատ կարևոր են: Նունեի հոր կյանքը սերտորեն կապվում է 1915-ի Հայոց ցեղասպանության, Հայաստանի առաջին Հանրապետության ու Խորհրդային Հայաստանի առաջին երկու տասնամյակների հետ:

Վ. Տերոյանը 1909-ին մեկնել է Փարիզ և ընդունվել Սորբոնի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ, որն ավարտել է 1912-ին: Հետագայում, ինչպես ընդունված էր այն ժամանակներում, ուսումը շարունակել է գերմանական մի քանի համալսարաններում, նաև՝ Ավստրիայում և Իտալիայում: Մշտապես և ամենուր ուսումնասիրել է փիլիսոփայություն: Տիրապետել է ֆրանսերենին ու գերմաներենին, եղել է բազմազետակ: 1915-ին Վանի գաղթականների հետ գալիս է Երևան ու ստանձնում մի շարք կարևոր պաշտոններ: Ծանր ու վտանգավոր ժամանակներն արգելք չեն դարձել նրա ներքին մղումով կատարված կարևոր թարգմանություններին: Թարգմանել է փիլիսոփայական մտքի հսկաների՝ Իմանուիլ Կանտի, Ռենե Դեկարտի, Գեորգ Հեգելի, Բենեդիկտ Սպինոզայի, Վիլհելմ Վինդեբանդի կարևոր աշխատությունները: Հետաքրքիր է Հիպոլիտ Տենի «Գեղարվեստի փիլիսոփայության» թարգմանությունը պատմությունը. այն լույս է տեսել Երևանում՝ 1935-ին, առանց թարգմանչի՝ Տերոյանի անվան: Զբաղվել է նաև գեղարվեստական գրականության թարգմանությամբ. 1935-ին լույս է տեսել նրա թարգմանած Հանրի Բարբյուսի «Կրակը» և այլ հեղինակների գործեր: Թարգմանել է նաև Նոբելյան մրցանակի դափնեկիր Անատոլ Ֆրանսի «Կարմիր շուշանը», որը լույս է տեսել 1946-ին՝ հետմահու:

Երկար կարելի է գրել Վ. Տերոյանի գիտական ու հասարակական գործունեության մասին: 1933-ից սկսած մի քանի անգամ ձերբակալվել է, սակայն կարողացել է ազատ արձակվել, իսկ 1935-ին նորից ձերբակալվել է, քչվել Սիբիր ու այնտեղ կնքել մահկանացուն 1938-ին: Երևանում մնացել են նրա ուսուցչուհի կինը և երեք զավակները՝ 2 որդի և Նունե դուստրը, որը երեխաներից ավագն էր:

Ն. Դերոյանի մայրն արմատներով Արցախի Շուշի քաղաքից էր և նույնպես կրթված ու պատվարժան գերդաստանի դուստր: Նրա եղբայրը՝ Հարություն Միրզա-Ավագյանը (1879–1937), Հայաստանում ժամանակակից վիրաբուժութ-
յան հիմնադիրներից էր: 1927-ին նա առաջինն է հաջողությամբ կատարել սրտի վիրահատություն: Անհիմն բռնադատվել է, հետո՝ հետմահու արդարաց-
վել:

1935-ին Ն. Դերոյանը՝ ընդամենը 12 տարեկան գեղեցիկ ու խելացի մի աղ-
ջիկ, դառնում է մոր օգնականն ու իրենից փոքր եղբայրներին շրջապատում
քրոջը հատուկ հոգատարությամբ: Ընտանեկան ծախսերը խնայելու նպատա-
կով երբեք տրամվայ չէր նստում, այլ դասի էր գնում ոտքով:

Ն. Դերոյանի կյանքն ու ընտանիքի պատմությունն ապացուցում են, որ ի
ծնե աշխատասեր, ազնիվ, հայրենասեր, մարդասեր անհատները երբեք չեն փո-
խում իրենց տեսակը, ներքին բովանդակությունը՝ անկախ կյանքի դժնդակ
պայմաններից: Հիմա հասկանալի է, թե ինչու Նունե Դերոյանն այդքան աշ-
խատասեր էր, շիտակ, սկզբունքային, հայրենասեր:

Ովքեր եղել են նրա թաղմանը, կվկայեն, որ անգամ մահվան մահճում՝ 101
տարեկանում, նա դեռ գեղեցիկ էր:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ